ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49

ք. Երևան « 12 » « 04 » 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Էներգո Սվյազ Պրոմ Ստրոյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ավագյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ N6 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 150 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն

պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **26,280,000 (քսանվեց միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 4,380,000 (չորս միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 33 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Աբովյան 2 Մ/Շ 29-1
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝03535122
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 220113330629000
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Կոտայք» մ/ճ
Գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյան	Տնօրեն Սերգեյ Ավագյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«12» 04 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ՄԵՎԱՆԻ Ն6 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	E46-124	Փայտյա դռների ապամոնտաժում	մ^2	42.25	1.36	57.65
2	E46-122	Փայտյա պատուհանների ապամոնտաժում /պատուհանագոգերով 39.4 գծմ/	մ^2	99.92	2.30	229.84
3	E46-88	10սմ հաստության միջնորմների քանդում թեթևաբետոնե բլոկներից	մ^2	16.82	0.94	15.86
4	E46-102	Տախտակե հատակի քանդում	մ^2	608.78	0.54	328.18
5	P5-42	Փայտե շրիշակների քանդում	գմ	267.40	0.01	3.51
6	P9-26	Մետաղական բազրիքների ապամոնտաժում, բռնածողով	գմ	8.5	0.53	4.48
7	P11-225	Գաջե սվաղի քանդում պատերից/մասնակի	մ^2	40	0.87	34.75
8	P11-229	Գաջե սվաղի քանդում առաստաղներից /մասնակի	մ^2	22.00	1.14	25.00
9	P15-66	Թղթե պաստառի քերում պատերից	մ^2	420.00	0.09	36.96
10	P 14-418 k=0,6	Սոսնձաներկի մաքրում պատերից	մ^2	525.1	0.33	172.16
11	P 14-363 k=0,6	Յուղաներկի մաքրում պատերից	մ^2	360	0.39	139.88
12	P 14-419 k=0,6	Սոսնձաներկի մաքրում առաստաղներից	մ^2	613.95	0.41	250.19
13	C310-5 տ.մ.կ. 29	Հատակի տակից աղբի դուրս բերում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 58.0խմ /ծավալը տրված է պայմանականորեն, ենթակա է ճշտման հատակի քանդման աշխ.-երից հետո/	տ	56.40	2.66	149.96
14	C310-13 տ.մ.կ. 29	Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 13կմ	տ	52.0	4.07	211.80
		Կառուցողական աշխատանքներ				
1	E8-169	Միջնորմերի կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 10սմ հաստությամբ	մ^2	19.46	3.53	68.79
2	E8-140	Միջնորմների իրականացում թեթեւաբետոնե բլոկերից 20սմ հաստությամբ /բացվածքների շարում/	մ^3	3.6	25.21	90.77
3	E6-106 K=0.5	Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով	մ^3	1.10	54.30	59.73
4	շուկա	Ամրան ∅10A500C	տ	0.035	423.26	14.81
5	շուկա	Ամրան Φ6AcI	տ	0.042	520.26	21.85
6	շուկա	Անկյունակ L50x4	տ	0.025	670.16	16.75
7	E6-170	Ե/բ միաձույլ բարավորների պատրաստում B12.5 դասի բետոնից	մ^3	0.06	67.97	4.08
8	շուկա	Ամրան Φ6AcI	տ	0.019	520.26	9.88
9	շուկա	Ամրան ∅14A500C	տ	0.015	423.26	6.35
		Բացվածքներ				
1	E10-120	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող	մ^2	22.090	37.16	820.88
2	E10-120	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող	մ^2	73.710	24.56	1810.63
3	E6-1	Բետոնի հարթեցնող շերտի իրականացում B7.5 դասի բետոնից, պատուհանների տակ	մ^3	0.75	36.28	27.21

4	շուկա	Պլաստմասե պատուհանագոգեր b=30սմ, սպիտակ	գմ	41.8	3.90	163.21
5	E10-105	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (հայկական) դուռ /ներառյալ սարքերը, կողպեքները,/	մ^2	9.71	47.55	461.74
6	E10-105	ՄԴՖ-ից դռների տեղադրում	մ^2	30.24	50.84	1537.26
7	շուկա	Դռների շեմերի իրականացում /մետաղական/	գմ	16	1.66	26.60
		Հատակներ			0.00	0.00
1	E1-1185	Գրունտի տուփանում	մ^3	30.249	0.31	9.34
2	E11-4	Խարամիշերտի իրականացում	մ^3	16.22	5.28	85.59
3	E11-6	Խճի շերտի իրականացում	մ^3	89.4	14.65	1309.92
4	E11-11	Բետոնե նախաշերտի իրականացում	մ^3	16.22	44.88	727.90
5	E11-11	Բետոնե նախաշերտի իրականացում B12.5 դասի բետոնից 8սմ հաստ.	մ^3	26.489	45.74	1211.54
6	E8-27	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մածիկով	մ^2	332.49	1.06	351.72
7	E8-59	Ամրանացանցի տեղադրում	տ	0.489	66.81	32.67
8	շուկա	Ամրանացանց Φ4Bp բջիջը՝ 150x150մմ	մ^2	302.49	0.67	202.11
9	E11-55 E11-56 K=2	Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 30մմ հաստությամբ	մ^2	648.23	1.48	958.98
10	E15-77	Երեսապատում բազալտե սալերով	մ^2	7.2	21.47	154.57
11	E5-43	ՄԴՖ շրիշակների իրականացում	գմ	318.4	1.19	379.62
12	E11-252	Լամինատե հատակի պատրաստում 10մմ /արտերկրյա, ներառյալ սպունգը /	մ^2	422.52	9.41	3975.17
13	E11-135	Խեցեսալե հատակի իրականացում	մ^2	14.28	7.30	104.21
14	E11-221-2	Հատակների պատրաստում կերամոգրանիտե սալերից 400x400	մ^2	211.79	13.72	2906.54
15	E11-252	Կերամոգրանիտե շրիշակների պատրաստում, h=10սմ	գմ	162.8	1.47	239.42
		Ներքին հարդարման աշխատանքներ				
1	E15-262	Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով, բարելավված որակի /նոր սվաղ/	մ^2	70.26	2.05	143.69
10	E15-82	Պատերի երեսապատում հախճասալով	մ^2	69.14	8.48	586.37
2	E34-389 K=0.5	Առաստաղի երեսպատում ՊՎՔ նյութով, մետաղական հիմնակմախքով	մ^2	14.28	5.98	85.43
3	շուկա	Շեպերի մետաղական հարդարող անկյունակների տեղադրում	գմ	180	0.26	46.26
4	E15-246a	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի /նոր սվաղ/	մ^2	93.72	2.52	236.04
5	E15-246a	Պատերի գաջե սվաղում բարելավված որակի /մասնակի/	մ^2	15	2.52	37.78
6	E15-247a	Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի /մասնակի/	մ^2	25	2.98	74.58
7	E15-277a	Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում	մ^2	30.52	5.91	180.23
8	E15-273	Արտաքին պատերի շեպերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով, բարելավված որակի	մ^2	14.26	2.29	32.72
9	E15-669	Պատերի և շեպերի ներկում յուղաներկով բարելավված որակի	մ^2	678.15	2.37	1606.41
10	E15-660 կիր.	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով բարելավված որակի	մ^2	820.54	1.73	1418.56
11	E15-661	Առաստաղների ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, մածկապատմամբ	մ^2	633.95	1.87	1186.46
		Այլ աշխատանքներ				
1	E20-409 կիր.	Օդափոխության մետաղական ցանցի տեղադրում	հատ	10	4.42	44.21
2	շուկա	Ալյումինե բազրիքների տեղադրում /բռնածողով/ , բարձր որակի	գմ	8.5	37.79	321.22
		Կառուցողական աշխատանքներ				
1	E19-6	Ջեռուցման միակոնտուրային կաթսայի տեղադրում 36կվտ /առանց ծխնելույզի/	հատ	2	638.65	1277.29
2	շուկա	Կաթսայի ծխատար /գործարանային/	հատ	2	14.66	29.33
3	E18-112	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էքմ	114.45	0.77	88.02
4	շուկա	Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը H=500մմ	սեկ-ցիա	327	6.00	1960.92
5	12-811-2	Փական PPR Φ32x32 կեսպտույտ	հատ	4	2.62	10.47

6	շուկա	Փոխակերպիչ 1M"x3/4"F	հատ	4	0.05	0.21
7	12-811-1	Փական PPR Φ20x20 կեսպտույտ	հատ	2	3.20	6.41
8	E18-212	Ձտիչ Φ20x20 PPR	հատ	2	3.37	6.74
9	12-811-1	Փական Φ1/2"M շտուցերով	հատ	2	3.18	6.36
10	շուկա	Փոխակերպիչ Φ32X1" F (H) PPR	հատ	4	0.08	0.31
11	շուկա	Փոխակերպիչ Φ20X1/2" F (H) PPR	հատ	2	0.06	0.12
12	շուկա	Փոխակերպիչ Φ20X1/2" M (H) PPR	հատ	2	0.06	0.12
13	շուկա	Եռաբաշխիչ Φ32x1/2"Fx32 PPR сльв	հատ	4	0.28	1.11
14	շուկա	Եռաբաշխիչ Φ1/2" FxFxF	հատ	2	0.06	0.12
15	շուկա	Նիպել Φ1/2" MxM	հատ	2	0.29	0.57
16	շուկա	Փոխակերպիչ Φ3/4"Mx1/2"M	հատ	1	0.04	0.04
17	շուկա	Մետաղ. խող., գազի 3/4 (50-100սմ)	հատ	2	1.81	3.63
18	Շուկա	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր d 20-25	հատ	115.000	0.110	12.690
19	Շուկա	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր d 32-40	հատ	125.000	0.317	39.681
20	Շուկա	Խողովակների ամրակապիչներ	հատ	670.00	0.109	72.922
21	շուկա	Մարտկոցի մոնտաժման կոմպլեկտ	հատ	35	0.86	30.16
22	շուկա	Միջադիր	հատ	105	0.07	6.83
23	շուկա	Մարտկոցի կախիչ	հատ	35	0.63	22.06
24	12-811-1	Հետադարձ գծի արբերիչ (լրիվ պտույտ)	հատ	35	4.08	142.85
25	12-811-1	Ջեռքի կարգ. արբերիչ	հատ	35	4.12	144.34
26	E16-264	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 , d40մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	8.000	7.032	56.255
27	E16-263	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 , d32մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	210.000	3.898	818.663
28	E16-262	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 , d25մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	150.000	4.022	603.351
29	E16-261	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 , d20մմ /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	120.000	4.534	544.087
30	շուկա	Մեկուսիչ սպունգ Φ22, L=2մ	գմ	1	1.24	1.24
31	շուկա	Մեկուսիչ սպունգ Φ35, L=2մ	գմ	10	2.60	26.00
32	շուկա	Պոլիմեր.պարուր-ժապավեն մեծ 3/4	հատ	10	0.30	3.02
33	E46-48	Անցքերի բացում միջնապատերում	հատ	14	2.69	37.67
34	E46-99	Հատակի բետոնի շերտի քանդում	մ^3	0.16	18.94	3.03
35	E46-74	Անցքերի լցափակում	մ^3	0.36	205.76	74.07
36	E11-11	Հատակի բետոնե շերտի վերականգնում	մ^3	0.16	44.88	7.18
37	շուկա	Խծուծ	կգ	0.15	11.56	1.73
		Ապամոնտաժման աշխատանքներ				
1	8-591-11 K=0.4	Ապամոնտաժվող վարդակ	հատ	5	0.14	0.70
2	8-591-11 K=0.4	Ապամոնտաժվող անջատիչ	հատ	24	0.14	3.37
3	P11-2 կիր.	Ապամոնտաժվող բաժանման տուփ	հատ	30	0.09	2.78
4	8-402-2 K=0.4	Հոսանքի հաղորդալարի ապամոնտաժում	գմ	30.00	0.12	3.59
5	C310-5 տ.մ.կ. 29	Շին աղբի հավաքում, բարձում ինքնաթափերի վրա եւ տեղափոխում 5կմ	տ	0.1	2.66	0.27
		Կառուցողական աշխատանքներ				
1	8-603-1	Լուսատու առաստաղային 300մմx300մմ, LED լամպով 220 Վ,25 ՎՏ	լրակ ազմ	34.0	12.545	426.515
2	8-603-1	Լուսատու առաստաղային 600մմx600մմ, LED լամպով 220 Վ,36 ՎՏ	լրակ ազմ	34.0	27.087	920.942
3	8-603-1	Լուսատու ներկառուցված LED լամպով 220 Վ,7 ՎՏ	լրակ ազմ	6.0	16.354	98.123
4	8-604-4	Լուսատու էվակուացիոն LED լամպով «ԵԼՔ» նշանով,մարտկոցով ,220 Վ,18 ՎՏ	լրակ ազմ	2.0	10.701	21.403
5	8-402-1	Հաղորդալար պղնձե, մեկուսացված,բաժանիչ հիմքով,հատվածքը ՊՊՎr 3x4 մմ2	գմ	560.0	1.064	595.779

6	8-402-1	Հաղորդալար պղնձե, մեկուսացված,բաժանիչ հիմքով,հատվածքը ՊՊՎr 3x2,5 մմ2	գմ	850.0	0.729	619.767
7	8-591-2	Անջատիչ միատակ 220 Վ, 6Ա,տուփով	հատ	20.0	1.659	33.174
8	8-591-9	Անջատիչ երկտակ 220 Վ, 6Ա,տուփով	հատ	4.0	5.585	22.339
9	8-591-6	Երկբևեռ խրոցակային վարդակ երրորդ հողանցման հպակով,220 Վ,6 Ա, տուփով	հատ	33.0	2.369	78.166
10	Շուկա	Ճյուղավորման տուփ	հատ	35.0	0.181	6.349
11	Շուկա	Ճարմանդ հաղորդալարերի ամրակապման համար	հատ	1100.0	0.045	49.884
12	E46-53	200 մմ հաստությամբ միջնորմի մեջ Φ200 մմ անցքի բացում	հատ	18.0	2.094	37.688
13	P23-57	Անցքերի վերականգնում	տեղ	18.0	1.443	25.980
14	E46-57	Ակոսների բացում պատերում	գմ	1410.0	0.272	383.977
15	E15-246	Ակոսների գաջի սվաղի վերականգնում	մ^2	70.0	2.847	199.306
16	8-612-7	Ավտոմատ անջատիչի տուփ 6 տեղանոց	հատ	2	19.81	39.62
17	8-525-1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16Ա	հատ	6	3.29	19.74
18	8-525-1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 25Ա	հատ	4	3.43	13.71
19	8-525-3	Ավտոմատ անջատիչ միաֆազ 40Ա	հատ	1	5.09	5.09
1	E16-50	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից ∅20մմ	գմ	2	1.14	2.29
2	E16-49	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից ∅15մմ	գմ	1.5	1.19	1.79
3	E16-55	Խողովակաշարի անցկացում պողպատե խողովակներից (g/ճ) Φ32x3մմ	գմ	41.0	2.19	89.94
4	E15-613	Գազախողովակների եւ այլ մետաղական մակերեւույթների երկշերտ յուղաներկում	մ^2	20.0	0.90	17.91
5	E24-341	Միացման տեղ գոյություն ունեցող գազատարին	տեղ	1	48.15	48.15
6	E19-73	Համակարգի պնեւմատիկ փորձարկում	գմ	44.5	0.56	24.78
7	E20-696	Մետաղական դետալներ, խողովակների ամրացման համար	կգ	10.0	0.76	7.61
8	E16-134	Գազի խցանային փականի տեղադրում ∅20մմ	հատ	1	11.44	11.44
9	E16-134	Գազի խցանային փականի տեղադրում ∅15մմ	հատ	2	7.03	14.06
10	շուկա	Գազի ճկուն խողովակ Φ20մմ, L=1.2մ	հատ	2	3.02	6.05
11	E16-52	Պաշտպանիչ պատյանի տեղադրում □32մմ,L=0.4մ, 2 հատ	գմ	1	1.52	1.52
12	E20-107	Օդատար ցինկապատ թիթեղից Φ150մմ	մ^2	2.9	6.29	18.17
13	E20-509	Հովանոց ցինկապատ թիթեղից Φ250մմ	հատ	1	38.91	38.91
14	E20-409	Կարգավորող ճաղավանդակ Φ150մմ	հատ	1	6.14	6.14
15	P23-42	Անցքի բացում պատի մեջ □40մմ, L=40սմ	հատ	1	1.58	1.58
16	P23-57	Անցքի լցափակում	հատ	1	0.99	0.99
17	11-343-1 11-540-13	Գազազդանշանային սարք, վթարային անջատիչ կափույրով	կ-տ	1	36.72	36.72
		Ընդամենը				35425.95
		ԱԱՀ, 20%				7085.19
		Ընդամենը				42511.14

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Գեղարքունիք մարզի Սևան քաղաքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Աբովյան 2 Մ/Շ 29-1
ՀՎՀՀ՝ 03535122
Հ/Հ՝ 220113330629000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Կոտայք» մ/ճ
Տնօրեն Սերգեյ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

«12» 04

Հավելված թիվ 2
2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ N6 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»	Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:	150 օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրով սահմանված աշխատանքների տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:	150 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Աբովյան
2 Մ/Շ 29-1
ՀՎՀՀ՝03535122
Հ/Հ՝ 220113330629000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՓԲԸ «Կոտայք» մ/ճ

Տնօրեն
Սերգեյ Ավագյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«12» 04 *2019 թ. կնքված*
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231129/518	շինարարական աշխատանքներ դպրոցների համար	-	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000	26,280,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Աշոտ Կիրակոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Աբովյան 2 Մ/Շ 29-1
ՀՎՀՀ՝03535122
Հ/Հ՝ 220113330629000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ»
ՓԲԸ «Կոտայք» մ/ճ

Տնօրեն
Սերգեյ Ափյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«12» 04 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Աբովյան 2 Մ/Շ 29-1
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝03535122
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 220113330629000
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Կոտայք» մ/ճ
Գործադիր տնօրեն Աշոտ Կիրակոսյան	Տնօրեն Սերգեյ Ավագյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 6
«12» 04 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49 ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Կապալառու
«ԷՆԵՐԳՈ ՍՎՅԱԶ ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Աբովյան
2 Մ/Շ 29-1
ՀՎՀՀ՝ 03535122
Հ/Հ՝220113330629000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
«Կոտայք» մ/ճ

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »_____ 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը **«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐԶԻ ՄԵՎԱՆԻ N6 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» աշխատանքներ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրի համարը՝ *ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49*

Սույնով Պատվիրատուն և ՀՀ, **Գեղարքունիք մարզի Սևան համայնքը**, մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ *ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/49* պայմանագրի 3.2.3 կետի պահանջները, կազմեցին սույն ԱԿՏ-ը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, ՀՀ **Գեղարքունիք մարզի Սևան համայնքի** հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց
ստորագրություն
ազգանուն, անուն
Կ.Տ.

Տարածքը ընդունեց
ստորագրություն
ազգանուն, անուն
Կ.Տ.